Վահան Տերյան

Սիրտը ցավում է անցած գնացած օրերիս համար

Սիրտը ցավում է անցած գնացած
Օրերիս համար.
Մեկը շշուկով պատմում է կամաց
Մեկը իմ հոգին տանջում է համառ:

Այդ հուշերի մեջ կա մի քաղցր ցավ.
Մի թովիչ երազ.
Մեկը իմ սիրտը փշրելով անցավ
Ու հեգնությունով նայում է վրաս:
Սակայն չեմ կարող ես նրան ատել
Սիրում եմ նրան.
Իմ կյանքը մի նուրբ մշուշ է պատել,
Գուրգուրում է ինձ մի լույս հանգրվան...
Մեկը իմ սիրտը փշրելով անցավ.
Օ՜, քաղցր արբանք:
Օրհնված եք դուք, սեր, ցընորք ու ցավ,
Օրհնված եք դուք, երկիր, երգ ու կյանք...

1905-1906